

նայն սուրբ խորհուրդս եւ զպապական ներու-
ղութիւն ղեր. Յովհաննէս Ղ.ն Արիմանեան,
առաջին գաբելան ժողովողեանս Հայոց զկնի
միոյ եւ կէս ամի հիւանդութեան իւրոյ կոչե-
ցելոյ սեւ դեղնացաւ ի տան պարոն Գրիգորին
չէրմէթեան, որում եւ զամենայն ինչս իւր նմա
եթող կտակաւ, թէպէտ եւ սակաւ ոչինչ գտաւ
առ նմա: Եւ ի Յ1 հոկտեմբերի յերեկոյն ըն-
կերակցութեամբ ամենայն ժողովողեան Հայոց
եւ բազմաց այլոց ազգաց, եւ ընկերակցու-
թեամբ Եղբայրութեան Սրբոյն Անտոնի Պա-
տուացւոյն փառաւորապէս բերեալ եղև յե-
կեղեցին մեր սաղմոսիւք եւ օրհնութեամբ, եւ
զկնի բազում աղօթից թաղեցաւ առաջի աւագ
խորանին Սրբոց Մարտիրոսաց ի գերեզմանին
Սինօր Գալոյին հրամանաւ Նորա. եւ թիւ ամաց
սորա 76: Էր սա կեսարացի եւ աշակերտ Սար-
գիս Ղարղապետին: Ես շ. Ղուկաս Սիմոնեան
եկեղեցպան վկայեմ:»

Գարձեալ Գաղատիոյ մէջ հրահանգած
էր Էօրտէկճեան Պետրոս պատանին, զոր վեր-
ջէն ղնետիկի մէջ (1747—1753) քահանայ
եւ վարդապետ ձեռնադրեց: Այս Պետրոս Ղ.
վերջէն սիրով ընկերացաւ Սարգսի յաբ-
սորս՝ անոր ծառայելու համար, ինչպէս վարը
պիտի տեսնենք: Պետրոս Ղ. 1772ին ղե-
նետիկ էր: